*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2013թ.փետրվարի 21-ի N 55-Ա որոշման*

## Երևանի ավագանու 2013 թվականի մայիսի 5-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

### Ընտրությունը նշանակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 14-ի թիվ որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 21.02.2013թ-ից

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 1 | Դիտորդների հավատարմագրումն իրականացվում կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարվում է.<br>***ընտրություն նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ*** | 30, մաս 2 | 21.02.2013-ից մինչև 25.04.2013 | ԿԸՀ |
| 2 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին եթերաժամ տրամադրող հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները (անկախ սեփականության ձևից) իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը հրապարակում են.<br>***ընտրության նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո*** | 19, մաս 4, 5 | մինչև 2.03.2013 | Հեռուստառադիո ընկերություններ |
| 3 | Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում Հայաստանի Հանրապետությունում աուդիտորի որակավորում ստացած ընտրական իրավունք ունեցող մեկ աուդիտոր նշանակում է.<br>***ընտրության նշանակումից հետո՝ 10-օրյա ժամկետում*** | 28, մաս 4 | մինչև 2.03.2013 | Ազգային ժողովի խմբակցություններ |
| 4 | Ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55, և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 152, մաս 3 | 11.03.2013 - 21.03.2013 մինչև ժամը 18:00 | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |
| 5 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով գովազդային վահանակներում քարոզչական պաստառներ տեղադրելու համար հայտերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են,<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55, և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 20, մաս 6 | 11.03.2013 - 21.03.2013 մինչև ժամը 18:00 | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 6 | Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ընտրության նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո*** | 18, մաս 3 | մինչև 12.03.2013 | Երևանի քաղաքապետ |
| 7 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հրապարակվում և կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ընտրության նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո*** | 19, մաս 10 | մինչև 12.03.2013 | ՀՌԱՀ |
| 8 | Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրելու համար 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկատվություն կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ընտրությունը նշանակվելուց հետո՝ 21-օրյա ժամկետում*** | 20, մաս 6 | մինչև 13.03.2013 | Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպություններ կամ մարմիններ |
| 9 | Երևան քաղաքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշումն ընդունվում է.<br>***ընտրությունը նշանակվելուց հետո՝ 21-օրյա ժամկետում*** | 20, մաս 3, 1-ին պարբ. | մինչև 13.03.2013 | Երևանի քաղաքապետ |
| 10 | Քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին Երևանի քաղաքապետի որոշումը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***որոշումն ընդունելուց հետո՝ 3-օրյա ժամկետում*** | 20, մաս 3, 2-րդ պարբ. | մինչև 16.03.2013 | Երևանի քաղաքապետ |
| 11 | Ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ*** | 152, մաս 4 | 21.03.2013 - 31.03.2013 | ԿԸՀ |
| 12 | Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանվում է.<br>***գրանցման ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը*** | 19, մաս 2 | 1.04.2013-ին | ԿԸՀ |
| 13 | Ընտրական տեղամասերը կազմավորվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ*** | 14, մաս 1 | մինչև 21.03.2013 | Լիազոր մարմին, մասնակցությամբ համայնքի ղեկավարի և ԸԸՀ անդամի |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 14 | Տեղամասային կենտրոնները սահմանվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ*** | 16, մաս 1 | մինչև 23.03.2013 | Երևանի քաղաքապետ |
| 15 | Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***սահմանվելուց հետո՝ 2-օրյա ժամկետում*** | 50, մաս 1, կետ 3 | մինչև 25.03.2013 | ԸԸՀ |
| 16 | Ընտրողների ցուցակների մեկ օրինակ տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ*** | 10, մաս 1 | մինչև 26.03.2013 | Լիազոր մարմին |
| 17 | Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ*** | 11, մաս 3 | մինչև 26.03.2013 | Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող |
| 18 | Ընտրողների ցուցակներն էլեկտրոնային կրիչով կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ*** | 10, մաս 4 | մինչև 26.03.2013 | Լիազոր մարմին |
| 19 | Ընտրողների ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի, լիազոր մարմնի համացանցային կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում են.<br>***քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 11, մաս 2 | 26.03.2013-ին | Լիազոր մարմին |
| 20 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից նախընտրական ծրագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած էլեկտրոնային ձևով ներկայացվելու դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.<br>***ներկայացվելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը*** | 6, մաս 4<br>ԿԸՀ որոշում 29.07.11թ. N 42-Ն | ներկայացվելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը | ԿԸՀ |
| 21 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվում են.<br>***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 3-օրյա ժամկետում*** | 155, մաս 6<br>3-րդ պարբ. | մինչև 3.04.2013 | ԿԸՀ |
| 22 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկանք կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է.<br>***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրը մեկ*** | 25, մաս 7 | 3.04.2013 -ից սկսած երեք աշխատանքային օրը մեկ | ՀՀ կենտրոնական բանկ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 23 | Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների) գույքի և ֆինանսական միջոցների մասին հայտարարագիր կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում*** | 6, մաս 6 | մինչև 5.04.2013 | Կուսակցության լիազոր ներկայացուցիչ |
| 24 | Կուսակցությունների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում*** | 6, մաս 5 | մինչև 5.04.2013 | Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներ |
| 25 | Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների) գույքի և ֆինանսական միջոցների մասին հայտարարագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.<br>***հայտարարագիրը ներկայացվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում*** | 6, մաս 7 | մինչև 8.04.2013 | ԿԸՀ |
| 26 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը՝ ըստ ընտրական տեղամասերի կատարվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ*** | 42, մաս 5, ԿԸՀ որոշում 30.06.11թ. N 14-Ն | մինչև 5.04.2013 | ԿԸՀ |
| 27 | Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 42, մաս 6 | 5.04.2013 - 10.04.2013 մինչև ժամը 18:00 | Աժ խմբակցություն ունեցող կուսակցու-թյուններ (կուսակցու-թյունների դաշինք), ԸԸՀ |
| 28 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է.<br>***գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը, ավարտվում՝ քվեարկության օրվանից մեկ օր առաջ*** | 18, մաս 1 | 7.04.2013 - 3.05.2013 մինչև ժամը 24:00 | Ընտրողներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 29 | Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է.<br>***կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին*** | 42, մաս 7 | 13.04.2013 ժամը 12:00-ին | ՏԸՀ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 30 | Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները և ՀՌԱՀ-ի եզրակացությունը հրապարակվում ու կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***ոչ ուշ, քան նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ օրը*** | 19, մաս 11 | 16.04.2013-ին | ՀՌԱՀ |
| 31 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.<br>***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը*** | 27, մաս 1 | 16.04.2013-ին | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 32 | Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.<br>***հայտարարագրերը ներկայացվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում.*** | 27, մաս 4 | մինչև 19.04.2013-ը, 29.04.2013-ը և 12.05.2013 | ԿԸՀ |
| 33 | Թեկնածուները, կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը ինքնաբացարկի մասին դիմում կարող են ներկայացնել.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 161, մաս 3 | մինչև 25.04.2013 մինչև ժամը 18:00 | Կուսակցություն, կուսակցությունների դաշինք, թեկնածու |
| 34 | Քվեաթերթիկների տպագրման համար ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ ընտրատարածքների և ընտրական տեղամասերի կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից 10 օր առաջ*** | 10, մաս 2<br>57, մաս 6 | 25.04.2013-ին | Լիազոր մարմին |
| 35 | Քվեաթերթիկի նմուշը սահմանվում է.<br>***քվեարկության օրվանից առաջ 10-րդ օրը*** | 49, մաս 1<br>կետ 5 | 25.04.2013-ին | ԿԸՀ |
| 36 | Քվեաթերթիկները տպագրվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ*** | 57, մաս 6 | 25.04.2013 - 2.05.2013 | ԿԸՀ |
| 37 | Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները և ՀՌԱՀ-ի եզրակացությունը հրապարակվում ու կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***ոչ ուշ, քան նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 20-րդ օրը*** | 19, մաս 11 | 26.04.2013-ին | ՀՌԱՀ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 38 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.<br>***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 20-րդ օրը*** | 27, մաս 1 | 26.04.2013-ին | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 39 | Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ*** | 12, մաս 1 | մինչև 30.04.2013 | Ընտրողներ, Լիազոր մարմին |
| 40 | Հաստատված դրոշմակնիքի նմուշներից մեկը, որպես օգտագործվող դրոշմակնիքի ձև ընտրվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ*** | ԿԸՀ որոշում 11.08.11թ. N 58-Ն | մինչև 30.04.2013 | ԿԸՀ |
| 41 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները, դրոշմակնիքները և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հանձնվում են.<br>***քվեարկությունից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ*** | 58, մաս 3 | 30.04.2013 - 2.05.2013 | ԿԸՀ |
| 42 | Ընտրողներին քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին ծանուցագիր ուղարկվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ*** | 11, մաս 6 | մինչև 2.05.2013 | Լիազոր մարմին |
| 43 | Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարն այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին կարող են ներկայացնել.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 43, մաս 4 կետ 5 | մինչև 2.05.2013 մինչև ժամը 18.00 | ՏԸՀ նախագահ, ՏԸՀ քարտուղար |
| 44 | Ըստ ընտրատարածքների և ընտրական տեղամասերի ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է<br>***քվեարկության օրվանից 3 օր առաջ*** | 10, մաս 2 | 2.05.2013-ին | Լիազոր մարմին |
| 45 | Ընտրողների ցուցակները ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար, ինչպես նաև ՏԸՀ-ի կողմից ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են.<br>***քվեարկության օրվանից 2 օր առաջ*** | 10, մաս 3 | 3.05.2013-ին | Լիազոր մարմին |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 46 | Ընտրողների ցուցակի օրինակը տեղամասային կենտրոնում բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է.<br>***քվեարկության օրվանից 2 օր առաջ*** | 11, մաս 4 | 3.05.2013-ին | ՏԸՀ նախագահ |
| 47 | Ընտրողների ցուցակներն էլեկտրոնային կրիչով կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից 2 օր առաջ*** | 10, մաս 4 | 3.05.2013-ին | Լիազոր մարմին |
| 48 | Ընտրողների ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի, լիազոր մարմնի համացանցային կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում են.<br>***քվեարկության օրվանից 2 օր առաջ*** | 11, մաս 2 | 3.05.2013-ին | Լիազոր մարմին |
| 49 | Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է.<br>***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն*** | 55, մաս 3 | մինչև 4.05.2013 մինչև ժամը 24:00 | Երևանի քաղաքապետ, ՏԸՀ նախագահ |
| 50 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, փաթեթավորված կնիքը, դրոշմակնիքը, հանձնաժողովի անդամների անհատական կնիքները հանձնվում են.<br>***քվեարկության նախորդ օրը*** | 57, մաս 7, մաս 10<br>58, մաս 4, | 4.05.2013-ին | ԸԸՀ |
| 51 | Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները, ընտրողների ցուցակների էջերը ստորագրվում են.<br>***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24:00-ն*** | 59, մաս 7 | 4.05.2013 մինչև ժամը 24:00 | ՏԸՀ |
| 52 | Ընտրողն իրեն ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմնին կարող է ներկայացնել.<br>***մինչև քվեարկության ավարտը*** | 12, մաս 2 | 5.05.2013 մինչև ժամը 20.00 | Ընտրողներ, Լիազոր մարմին |
| 53 | Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կապված բոլոր գործառնությունները դադարեցվում են.<br>***քվեարկության օրվանից***<br>*գործառնությունների կատարման վերջնաժամկետն է 2013թ.մայիսի 4-ը ներառյալ* | 26, մաս 7, 8 | 5.05.2013 ժամը 00:00-ից | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ, ՀՀ կենտրոնական բանկ |
| 54 | Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն սկսվում է.<br>***քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին*** | 62, մաս 1 | 5.05.2013 ժամը 07.00-ին | ՏԸՀ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 55 | Քվեարկությունը սկսվում է.<br>***քվեարկության օրը ժամը՝ 08:00-ից*** | 54, մաս 1<br>63, մաս 1 | **5.05.2013 ժամը 08.00-ին** | ՏԸՀ |
| 56 | Քվեարկությունն ավարտվում է.<br>***քվեարկության օրը ժամը՝ 20:00-ն*** | 67, մաս 1 | 5.05.2013 ժամը 20:00-ին | ՏԸՀ |
| 57 | Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփվում են և քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է.<br>***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո*** | 71, մաս 5 | 6.05.2013 մինչև ժամը 06:00 | ՏԸՀ նախագահ |
| 58 | Ընտրական փաստաթղթերի պարկը, չսահմանված նմուշի քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը և դրոշմակնիքը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 12 ժամվա ընթացքում*** | 71, մաս 9<br>ԿԸՀ որոշում 30.06.11թ. թիվ 21-Ն | 6.05.2013 մինչև ժամը 08:00 | ՏԸՀ նախագահ և քարտուղար |
| 59 | Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների հիման վրա տվյալների մուտքագրումը համակարգիչ ավարտվում է.<br>***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում*** | 73, մաս 2<br>ԿԸՀ որոշում 29.07.11թ. թիվ 45-Ն | 6.05.2013 մինչև ժամը 14:00 | ԸԸՀ |
| 60 | Ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում, արձանագրությամբ վավերացվում, հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակվում  են.<br>***քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո*** | 75, մաս 1<br>165, մաս 1 | 6.05.2013 մինչև ժամը 20:00 | ԿԸՀ |
| 61 | Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումներն ընդունվում են.<br>***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն*** | 48, մաս 1 | 6.05.2013 ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն | ԸԸՀ |
| 62 | Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***քվեարկության ավարտից 24 ժամ հետո*** | 73, մաս 3 | 6.05.2013 20:00 | ԸԸՀ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 63 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները, դրոշմակնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության ավարտից 24 ժամ հետո*** | 58, մաս 5, 7<br>ԿԸՀ որոշում 29.07.11թ. N 41-Ն | 6.05.2013 20:00 | ԸԸՀ |
| 64 | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են.<br>***վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, ժամը՝ 14.00-ին*** | 48, մաս 6 | 7.05.2013 ժամը 09:00 - 10.05.2013 ժամը 14:00 | ԸԸՀ |
| 65 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.<br>***ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ*** | 27, մաս 1 | մինչև 9.05.2013 | Կուսակցություն, Կուսակցությունների դաշինք |
| 66 | Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում ու կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ*** | 19, մաս 11 | մինչև 10.05.2013 | ՀՌԱՀ |
| 67 | Երևանի ավագանու ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում, ընտրության արդյունքներն ամփոփվում և ընտրության արդյունքների վերաբերյալ որոշումն ընդունվում է.<br>***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը*** | 75, մաս 2, 6<br>165, մաս 2 | 12.05.2013-ին | ԿԸՀ |